

ՊԵՌՏԻ ԾԱՌԱՅ ՅԻՄՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՏԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊՍՏՐԻՄՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱԾԵԾՄԱՐ ԱԹՈՒՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԼԻԿԷ ԷԶՄԻԱԾԻ:

Սիրեցեալ ողորդ Մերոց եւ հաւաքացից Մօրս Մերոյ յուսոյ Ս. Էջմիածնի, արանց եւ կանանց ամենայն դասու, որք ի քաղաքս եւ ի գետս՝ խնդակից ողջոյն եւ օրհնութիւն Հոյ-
րապետական եւ ի Միաժմանէջ Տաճարէս եւ յԱռաքելական Գահոյս Ս. Հօրն Մերոյ բազմա-
չափաւ Գրիգորի Լուսաւորչի:

Յօրէ անտի սկզբնաւորութեան Ս. Եկեղեցւոյս ոգի համայնական եւ քրիստոնէական լայնեզր հաւասարութեան ի գործս համայնական կեն-
ցաղոյն վայելեցաւ եւ զարգացաւ ի մեզ, որով ամենայն անդամս որ պիտա-
նաւոր համարէր ի գործակցութիւն հանրական շինութեան՝ գայր ի կանգ-
նուած նորա Ս. յգ ոգի աղբիւր կենդանութեան էր ի մեզ. ամենեցունց՝
որք միանգամ զգեցեալ զայն, յայն իսկ վայելին ի գործ համայնական
կազմութեանց, եթէ ի պահպանութիւն եւ եթէ ի փառազարդութիւն
եկեղեցեաց, որք ընդ հովանեաւ Ս. Եկեղեցւոյս ունեցեալ, զամենեւին
անդամս համահաւասար իրաւանց առնէին, եթէ անդամք արքայական
տան, եթէ շինական, եթէ նախարարական տանց ազատորեբայ սերունդ
եւ եթէ տկարաց կանանց ներկայացուցիչք: Ուստի եւ ամենայն ոք սիրով
միանգամ մտեալ ի նաւ համայնական կենցաղոյն, զիւրն բերէր սիրա-
յօժար կամօք գործակցութիւն:

Այլ սակայն այս ոգի, որ հիմն Ս. Եկեղեցւոյս եւ ընդթ ինքնատիպ
համայնականին մերոյ կազմէր կենցաղոյս էութեան, ընդ օտար ազդե-
ցութեամբ եւ օտարամուտ սկզբանց եւ խոհից եղեալ ենթակայ, այլասե-
ւից զգեցաւ հանդերձանս, մինչ ցմուռացումն իսկ նախնականին իւրոյ
ընդթ եւ տիպար իսկական: Այսինքն համայնական ի ձեւ նոր կերտեցաւ եւ
այդ կերտումն ընդ երկար համարեցաւ էական տիպար, որով ի կենաց
համայնական շրջանէ իսպառ վտարեցաւ մասնակցութիւն որոշ տարեբայ
ի գործ ազգային, յորոց ի թիւս կանայի սեւի գիտեմք:

Արդ, բաւ համարեսցի պահել ընդ գրուանաւ ոգի Եկեղեցւոյս, յոր
վայելեցաւ ի նախնականին շրջանի եւ ի յետնորդ դարս:

Ժողովուրդ Հայոց,

Յօրէ յայսմանէ արտօնեմք վերականգնիլ իրաւանց կանայի սեւի ի
ներքին գործ համայնական: Ամենայն անձն, կանայի սեւի, ունիցի
իրաւունս, զոյգ ընդ արանց, գալ ի հանդէս հանրական կենաց համա-
հաւասար յամենայն գործս, եթէ ի ձայնատուութեան եւ եթէ յընտրու-
թիւնս, գոլով իրաւատէր յընտրել եւ յընտրիլ, որ մինչ աստ միմիայն
վերապահութիւն եւ իրաւունք արանց համարէր:

Ժողովուրդ Հայոց,

Ամենայն գործ համայնական յազատ ընտրութիւն հանրական կազ-
մակերպութեան ունի լինել այսուհետեւ: Վերականգնումն նախնի կար-
գաց եւ կանոնաց այսօրիկ՝ գիտեմք հիմն յարատեւ կենսունակ գոյու-
թեան հաստատութեանց, յորս վայելեցան նախնիք մեր եւ յոր յու-
սալ յուսամք ունիք առաւելագոյն ցուցանել նախնաձախնդրութիւն ի
պահպանութիւն եւ ի զարգացումն հանրական շահուց եւ կենաց հաստա-
տութեանց:

Ուստի ըստ կանոնեալ հրահանգաց, որ ընդ հանրականիս Մերոյ այսու-
րիկ կանգակի առաքի առ առաջնորդս Ս. Եկեղեցւոյս, ունիք այսուհետեւ
մատչիլ յազատ ընտրութիւն Առաջնորդաց ձերոց հոգեւորաց, որպէս եւ
փոխանորդաց նոցին եւ ամենայն հոգեւոր պաշտօնէից, որք զմատակարա-
րութիւն Քրիստոնէականին տան վարդապետութեան եւ ուսման, ունիք
մատչիլ յընտրութիւն անդամաց Թեմական Ժողովոյ եւ Թեմական Խորհր-
դոց, որք կոչին ի գործակցութիւն գործաւնութեանց ընդ ընտրեալ Ա-
ռաջնորդի ձերոյ:

Եւ Մեր, որ Հայր հանուրց կոչեցաք եւ Գլուխ Ս. Եկեղեցւոյս ազատ ըն-
տրութեամբ ներկայացուցչաց ազգիս, ըստ կանոնեալ կարգաց Ս. Եկեղեց-
ւոյս, յուսալ յուսամք, եթէ վերականգնումն նախնիք իրաւանց եւ արտօնու-
թեանց հօտին իմոյ եւ զաւակաց սիրեցելոց հոգեւորաց, նոր ոգի խոհական
իմաստութեան ունի հեղուլ ի նոսա՝ արկանել ձեռն ի գործ ի կանգնումն
վայելչական շինութեան հանրական եւ ազգային հաստատութեանց, բարգա-
ւաճման դպրոցաց, եւ այլ եւ այլ կրթական բուժարանաց, բարեզարդութեան
Ս. Եկեղեցւոյս, որ խարխիս ամրակուռ երեւցաւ ի մեզ՝ ի պահպանութիւն
արտօնութեանց եւ իրաւանց մերոց դարուց ի դարս, յոր յեցան նախնիք
մեր ի Ժամ մրկակոծ կենցաղոյս մերոյ եւ նովաւ ի նաւահանգիստ վեր-
կութեան հասին, ունի աղօթս վերադարձել եւ վասն Մեր, զի ի հառա-
րակեալ առուրս մօրից արեւու մերոյ կենցաղականի, զօրացեալ ի Տէր,
մարթացուք ածել ի կատար զորոշեալն ի Մէջ, առ վերջնական կազ-
մակերպութիւն կանոնական Սահմանադրութեան վարչութեան Ս. Եկե-
ղեցւոյս ի ձեռն ազգային ընդհանուր Ժողովոյ, ըստ նախաւանդ կարգաց,
իրաւանց եւ ոգւոյ Մօրս մերոյ լուսոյ եւ հոգեւոր զաւակաց նորին:

Եկայք, որդեակք իմ հարազատք եւ սիրելիք, շուրջ պատեցէք զՄարբ
Ձերով, որ իբրեւ արծուի սրտատեսի եւ խնամարկողի ընդ թեօք իւրովք
պատապարեալ, եհան զմեզ զամենեսեանս ցոյս շրջան, տուք ինձ ձեռն
օգնականութեան եւ բազուկ զօրավիգ ի կանգնումն նորակերտ շինութեան
յոր մատչիմք, զի եւ Մեր զօրացեալ ի Ձեզ՝ ոգի նոր զգեցցուք ի խնա-
մել զՁեզ, յոր կոչումն կոչեցաք ի Տեառնէ եւ ի Փրկչէն Մերմէ Յիսու-
սէ Քրիստոսէ:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր եւ օրհնեալք ի Մէջ առ յաւէտ: Ամէն:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝

ՊԵՌՏԻ Ե.

ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

37-ն Սպրիլի 1917 ամի
Ըստ Տոմարիս ՌՅԿԶ
Ի Հայրապետութեան Մերում Զ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ

Թ. 678

